

Արձանագրություն №9/2012-2013

«Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝ 2013թ. հունիսի 27-ին տեղի ունեցած թիվ 9 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 88 (ութսունութ) անդամներից 69-ը (վաթսունինը):

Նիստը նախագահում էր ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը:

Ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը՝ առաջարկելով հանել 7-րդ կետը՝ Ա. Ստեփանյանի՝ հարգելի պատճառով բացակայելու հետ կապված.

- Ֆակուլտետային ամբիոնի վարիչի ընտրության մասին ֆակուլտետների գիտական խորհուրդների ընդունած որոշումների հաստատում** (Ձեկ.՝ հումանիտար մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Գ. Հ. Պետրոսյան, բնագիտական մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Ա. Ա. Սահակյան):
- Դոցենտի գիտական կոչումների շնորհում:** (Ձեկ.՝ հումանիտար մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Գ. Հ. Պետրոսյան, բնագիտական մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Ա. Ա. Սահակյան)
- Հաղորդում ԵՊՀ հավատարմագրման արտաքին փորձագիտական խմբի այցի նախնական արդյունքների մասին** (Ձեկ.՝ պրոռեկտոր Ա. Կ. Գրիգորյան):
- ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի գործունեության մասին:** (Ձեկ.՝ կենտրոնի տնօրեն Ա. Գ. Ղազինյան)
- ԵՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական կենտրոնի գործունեության մասին** (Ձեկ.՝ կենտրոնի գիտական ղեկավար Ս. Կ. Շուքուրյան):
- ԵՊՀ քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոնի գործունեության մասին** (Ձեկ.՝ կենտրոնի տնօրեն Դ. Ա. Հովհաննիսյան):
- Գիտական զեկուցում. <<Հայոց քաղաքակրթային ինքնությունը պատմության հոլովություն. Արտաշիսյան դարաշրջան>>** (Ձեկ.՝ Համաշխ. պատմության ամբիոնի վարիչ, պ.գ.դ., պրոֆեսոր Ա. Ա. Ստեփանյան):
- Ընթացիկ հարցեր
 - 8.1 <<Երևանի պետական համալսարանի մասս-մեդիայի կրթական կենտրոն>>** կառուցվածքային ստորաբաժանում ստեղծելու մասին:
 - 8.2 Հայցորդների մասին** (Ձեկ.՝ պրոռեկտոր Գ. Գ. Գևորգյան):

8.3 Ակտուարական մաթեմատիկայի ամբիոնի անվանափոխության մասին (Զեկ,՝
մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի դեկան Ա. Ա. Սահակյան):

8.4 Պրոֆ. Տարիել Բարսեղյանին Քաղաքացիական իրավունքի ամբիոնի պատվավոր
վարիչի կոչում շնորհելու մասին:

8.5 Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախագահ Դին Սփիելմանին ԵՊՀ
պատվավոր դոկտորի կոչում շնորհելու մասին:

8.6 Դեղագործական քիմիայի ամբիոնի վարիչ Աշոտ Սադյանի <<Կենսատեխնոլոգիա>>
վերնագրով դասագիրքը հրատարակության երաշխավորելու և այն որպես բուհական
դասագիրք ճանաչելու հարցում ՀՀ կրթության և գիտության նախարարությանը միջնորդելու
մասին:

8.7 Ռումանագերմանական բանասիրության ֆակուլտետի կանոնադրությունում կատարված
փոփոխությունները հաստատելու մասին: (զեկ՝ գիտքարտուղար Մ. Ա. Սողոմոնյան)

8.8 Միջուկային ֆիզիկայի ամբիոնի դոցենտ Անահիտ Բալաբեկյանի <Միջուկային
ռեակցիաներ> վերնագրով ուսումնական ձեռնարկը հրատարակության երաշխավորելու և
այն որպես բուհական ձեռնարկ ճանաչելու հարցում ՀՀ կրթության և գիտության
նախարարությանը միջնորդելու մասին:

**1. Լսեցին. - Ֆակուլտետային ամբիոնի վարիչի ընտրության մասին ֆակուլտետների
գիտական խորհուրդների ընդունած որոշումների հաստատման մասին:**

ԵՊՀ գիտական խորհրդի հումանիտար և բնագիտական մասնագիտությունների գծով
մրցութային հանձնաժողովների նախագահներ Գ. Հ. Պետրոսյանը և Ա. Ա. Սահակյանը
ներկայացրեցին ֆակուլտետների գիտական խորհուրդների որոշումներով ամբիոնի վարիչ
ընտրված դոցենտներին և պրոֆեսորներին՝ նշելով զբաղեցրած պաշտոնը, հավակնած
պաշտոնը, տվյալներ նրանց գիտամանկավարժական գործունեության վերաբերյալ:

Ֆակուլտետների գիտական խորհուրդների կողմից ընտրված և ԵՊՀ գիտական խորհրդի
հաստատմանը ներկայացված ամբիոնի վարիչի պաշտոնի հավակնորդներն էին.

Հ/Հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Աշխատանքի վայրը, պաշտոնը (երբվանից)	Գիտական աստիճանը, կոչումը (մասնագիտ. շիֆր)	Ինչ պաշտոնի համար է դիմել
1	Հովսեփյան Սուշեղ Մայիսի	Ռադիոհեռուստատեսայ ին ժուռնալիստիկայի ամբ. վարիչ /2001/	բանասիր. գիտ. դոկտոր /2003/ Ժ.01.06 – ժուռնա- լիստիկա պրոֆեսոր /2007/	Ռադիոհեռուստատեսային ժուռնալիստիկայի ամբ. վարիչի
2	Պետրոսյան Դավիթ Վլադիմիրի	Մամուլի տեսության և պատմության ամբ. վարիչ /2007/	բան. գիտ. դոկտոր /2008/ Ժ.01.06 – ժուռնալիստիկա պրոֆեսոր /2011/	Մամուլի տեսության և պատմության ամբ. վարիչի
3	Ավետիսյան Վահրամ Դավիթի	Քաղաքացիական իրավունքի ամբ. դոցենտ /2007/	իրավաբան. գիտ. թեկնածու /2002/ ԺԲ.00.03 – քաղաքա- ցիական իրավունք, դոցենտ /2006/	Քաղաքացիական իրավունքի ամբ. վարիչի

4	Մեղրյան Սերգեյ Գուրգենի	Քաղաքացիական դատավարության ամբ. վարիչ /2007/	իրավաբան. գիտ. թեկնածու /2000/ ԺԲ.00.03 – քաղաքացիական իրավք, դոց. /2006/	Քաղաքացիական դատավարության ամբ. վարիչի
5	Քոչարյան Վիգեն Վլադիմիրի	Եվրոպական և միջազգային իրավունքի ամբ. վարիչ /2006/	իրավաբան. գիտ. թեկնածու /1996/ ԺԲ.00.06 – միջազգային իրավունք, դոցենտ /2004/	Եվրոպական և միջազգային իրավունքի ամբ. վարիչի
6	Պետրոսյան Վարդան Զորիկի	Ընդհանուր լեզվաբանության ամբ. դոցենտ /2008/	բան. գիտ. թեկնածու /1995/ Ժ.02.02 – ընդհանուր և կիրառ լեզվաբանութ., դոցենտ -2008	Ընդհանուր լեզվաբանության ամբ. վարիչի
7	Ավետիսյան Յուրի Սրապիոնի	Սփյուռքագիտության ամբ. վարիչ /2009/	բանասիր. գիտ. դոկտոր /2003/ Ժ.02.01 – հայոց լեզու պրոֆեսոր - 2008	Հայոց լեզվի ամբ. վարիչի
8	Հարությունյան Նազիկ Կարապետի	Մանկավարժության ամբ. վարիչ /1996/	մանկ. գիտ. դոկտոր /2002/ ԺԳ.00.01 – մանկավարժ. տես. և պատմ., պրոֆեսոր - 2006	Մանկավարժության ամբ. վարիչի
9	Երզնկյան Ելենա Լևոնի	Անգլերենի թիվ 2 ամբ. վարիչ /1993/	բանասիր. գիտ. դոկտոր /2012/ Ժ.02.07 - գերմանական լեզուներ պրոֆեսոր 2009	Անգլերենի թիվ 2 ամբ. վարիչի
10	Պարոնյան Շուշանիկ Հարությունի	Միջմշակութային հաղորդակց. անգլ. ամբ. վարիչի պաշտոնակատ. /2012/	բանասիր. գիտ. դոկտոր /2010/ Ժ.02.07 - գերմանական լեզուներ, դոցենտ /2004/	Միջմշակութային հաղորդակց. անգլ. ամբ. վարիչի
11	Ավանեսյան Հրանտ Միքայելի	Ընդհանուր հոգեբանության ամբ. վարիչ /2006/	հոգեբան. գիտ. դոկտոր /2004/ ԺԹ.00.01 – հոգեբան. տես. և պատմ. պրոֆեսոր /2006/	Ընդհանուր հոգեբան. ամբ. վարիչի
12	Խաչատրյան Նարինե Գագիկի	Անձի հոգեբանության ամբ. վարիչի պաշտոնակատ. /2011/	հոգեբան. գիտ. թեկնածու /2006/ ԺԹ.00.01 – հոգեբան. տես. և պատմ. դոցենտ/2009/	Անձի հոգեբանության ամբ. վարիչի
13	Հարությունյան Ռոմիկ Սուրենի	Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբ. վարիչի պաշտոնակատար /2013/	քիմ. գիտ. դոկտոր /1997/ Բ.00.01 – անօրգանական քիմիա, պրոֆեսոր /2007/	Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբ. վարիչի
14	Հովհաննիսյան Արթուր Հովհաննեսի	Ռադիոֆիզ. ֆ-տի բարձրագույն մաթեմատիկայի ամբ. վարիչ /2002/	ֆիզմաթ. գիտ. դոկտոր /1992/ Ա.00.01 – մաթեմատիկա, պրոֆեսոր /2007/	Ռադիոֆիզ. ֆ-տի բարձրագույն մաթեմատիկայի ամբ. վարիչի
15	Ալավերդյան Գրիգոր Բախշիի	Ալիքային պրոցեսների տեսության և ֆիզիկայի ամբ. վարիչի պաշտոնակատար /2012/	ֆիզմաթ. գիտ. թեկնածու /1980/ Ա.04.03 – ռադիոֆիզիկա դոցենտ /1985/	ալիքային պրոցեսների տեսության և ֆիզիկայի ամբ. վարիչի

Ռեկտոր Ա. Հ. Միմոնյանը նիստի մասնակիցներին առաջարկեց հարցեր ուղղել ամբիոնի վարիչի մրցույթի մասնակիցներին: Պրոռեկտոր Ա. Գրիգորյանը ընդհանուր լեզվաբանության ամբիոնի վարիչի թեկնածու Վ. Պետրոսյանին հարց ուղղեց առ այն, թե որքանով պատկերացում ունի ԵՊՀ-ի՝ հավատարմագրման գործընթացներում ներգրավվածության մասին: Վ. Պետրոսյանը պատասխանեց, որ գտնվում է կրթական մենեջմենթի ֆակուլտետային մակարդակի պարտականությունների ու անելիքների յուրացման փուլում:

Ռեկտոր Ա. Հ. Միմոնյանի առաջարկով կազմվեց հաշվիչ հանձնաժողով՝ հետևյալ անդամներով՝

1. Սաղյան Աշոտ Սերոբի (նախագահ)
2. Աղասյան Ժասմեն Արտաշեսի
3. Շեկյան Լեոնարդ Արամի
4. Թադևոսյան Նելլի Հենրիի
5. Ազարյան Արսեն Մարտինի

Կազմակերպվեց փակ, գաղտնի քվեարկություն, որին մասնակցեցին նիստին ներկա 69 անդամներից 68-ը: Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Ա. Սաղյանը ներկայացրեց քվեարկության արդյունքները.

h/h	Ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	անվավեր
1.	Հովսեփյան Մուշեղ Մայիսի	66	2	0
2.	Պետրոսյան Դավիթ Վլադիմիրի	64	3	1
3.	Ավետիսյան Վահրամ Դավիթի	64	4	0
4.	Մեղրյան Սերգեյ Գուրգենի	65	3	0
5.	Քոչարյան Վիգեն Վլադիմիրի	63	5	0
6.	Պետրոսյան Վարդան Ջորիկի	53	13	2
7.	Ավետիսյան Յուրի Սրապիոնի	63	5	0
8.	Հարությունյան Նազիկ Կարապետի	64	4	0
9.	Երզնկյան Ելենա Լևոնի	63	5	0
10.	Պարոնյան Շուշանիկ Հարությունի	65	3	0
11.	Ավանեսյան Հրանտ Միքայելի	65	3	0
12.	Խաչատրյան Նարինե Գագիկի	67	1	0
13.	Հարությունյան Ռոմիկ Սուրենի	65	3	0
14.	Հովհաննիսյան Արթուր Հովհաննեսի	65	3	0
15.	Ալավերդյան Գրիգոր Բախշիի	67	1	0

Որոշեցին. – 1.1 Հաստատել փակ, գաղտնի քվեարկության արդյունքները:

1.2 Հաստատել վերոնշյալ հավակնորդներին ամբիոնի վարիչի պաշտոններում ընտրվելու մասին համապատասխան ֆակուլտետների գիտական խորհուրդների որոշումները:

2. **Լսեցին.** –**Ռոցենտի կոչում շնորհելու մասին:** Հումանիտար մասնագիտությունների զծով մրցութային հանձնաժողովի նախագահ Գ. Հ. Պետրոսյանը և քնագիտական

մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Ա. Ա. Սահակյանը ներկայացրեցին նաև դոցենտի կոչման հավակնորդների մասին ամփոփ տվյալներ:

Դոցենտի կոչման հավակնորդներն էին.

	Ազգանուն, անուն, հայրանուն	Աշխատանքային վայրը, պաշտոնը	Գիտական աստիճանը, կոչումը /մասնագիտ. շիֆրը/
1.	Մինասյան Լիլիթ Ռոբերտի	համաշխարհային պատմության ամբ. ասիստենտ	պատմ.գիտ. թեկնածու /2012/ Է.00.02 – համաշխարհային պատմություն
2.	Մարտիրոսյան Հայկ Սամսոնի	պետության և իրավունքի պատմ. և տես. ամբ. ասիստենտ	իրավ. գիտ. թեկնածու /2005/ ԺԲ.00.01 – պետ. և իրավ. պատմ. և տեսություն
3.	Սոխակյան Աշոտ Սուրենի	սոցիալական փիլ. և բարոյագիտ. ամբ. ասիստենտ	փիլ. գիտ. թեկնածու /2009/ Թ.00.04 – սոցիալական փիլ. և բարոյագիտ.
4.	Տեր-Պետրոսյան Լիլիթ Դավիթի	արաբագիտ. ամբ. ասիստենտ	բանասիր. գիտ. թեկնածու /2008/ Ժ.02.06 - Ասիայի հին և նոր լեզուներ
5.	Համբարձումյան Հայկ Աշոտի	հայ գրականության ամբ. ասիստենտ	բանասիր. գիտ. թեկնածու /2009/ Ժ.01.01 – հայ դասական գրականություն
6.	Դումանյան Արթուր Դերենիկի	թուրքագիտ. ամբ. ասիստենտ	պատմ. գիտ. թեկնածու /2007/ Է.00.00 – պատմություն
7.	Վերմիշյան Հարություն Ռաֆիկի	սոցիոլոգիայի տես. և պատմ. ամբ. ասիստենտ	սոց. գիտ. թեկնածու /2010/ ԻԲ.00.01 – սոց. տեսություն, պատմ., մեթոդաբանություն
8.	Գասպարյան Արա Սպարտակի	համաշխարհային պատմության ամբ. ասիստենտ	պատմ. գիտ. թեկնածու /2005/ Է.00.02 – համաշխարհային պատմություն
9.	Սիմոնյան Թամարա Ալեքսանի	մեխանիկայի ամբ. ասիստենտ	ֆիզմաթ. գիտ. թեկնածու /1999/ Ա.02.01 – տեսական մեխանիկա
10.	Դադայան Սլավիկ Արշակի	դեղագործական քիմիայի ամբ. ասիստենտ	քիմ. գիտ. թեկնածու /2006/ԺԵ.00.01 – դեղագիտություն
11.	Անանյան Գայանե Վոլոդի	մոլեկուլային ֆիզիկայի ամբ. ասիստենտ	ֆիզմաթ. գիտ. թեկնածու /2007/Գ.00.02 – կենսաֆիզիկա
12.	Պետրոսյան Մարգարիտ Թորգոմի	մանրէաբան., մանրէների և բույսերի կենսատեխնոլո-գիայի ամբ. ասիստենտ	կենսաբ. գիտ. թեկնածու /2001/Գ.00.05 - բուսաբանություն

Նույն հաշվիչ հանձնաժողովը կազմակերպեց դոցենտի հավակնորդների քվեարկությունը ևս: Քվեարկությանը մասնակցեց 68 հոգի: Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Ա. Սադյանը ներկայացրեց քվեարկության արդյունքները.

h/h	Ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	անվավեր
1.	Մինասյան Լիլիթ Ռոբերտի	65	1	2
2.	Մարտիրոսյան Հայկ Սամսոնի	63	3	2
3.	Սոխակյան Աշոտ Սուրենի	64	2	2
4.	Տեր-Պետրոսյան Լիլիթ Դավիթի	58	9	1

5.	Համբարձույան Հայկ Աշոտի	64	2	2
6.	Դումանյան Արթուր Դերենիկի	60	7	1
7.	Վերմիշյան Հարություն Ռաֆիկի	65	1	2
8.	Գասպարյան Արա Սպարտակի	64	2	2
9.	Սիմոնյան Թամարա Ալեքսանի	63	3	2
10.	Դադայան Սլավիկ Արշակի	65	1	2
11.	Անանյան Գայանե Վոլոդի	63	3	2
12.	Պետրոսյան Մարգարիտ Թորգոմի	64	2	2

Որոշեցին. – 2.1 Հաստատել փակ, գաղտնի քվեարկության արդյունքները:

2.2 Վերոնշյալ հավակնորդներին շնորհել դոցենտի գիտական կոչումներ:

2.3 Տասնհինգ օրվա ընթացքում նրանց գործերը ներկայացնել ՀՀ ԲՈՀ՝ շնորհված գիտական կոչումները հաստատելու և դիպլոմներ տալու համար

3. Լսեցին. - **Հաղորդում ԵՊՀ հավատարմագրման արտաքին փորձագիտական խմբի այցի նախնական արդյունքների մասին:** Պրոռեկտոր Ա. Գրիգորյանն անդրադարձավ ԵՊՀ հավատարմագրման արտաքին փորձագիտական խմբի՝ հունիսի 16-ից 19-ը ԵՊՀ կատարած փորձագիտական այցի ընթացքին ու նախնական արդյունքներին: Նշվեց, թե փորձագիտական խումբը համալսարանական կրթագիտական ո՛ր ոլորտներն է դիտարկման ենթարկել: Նշվեց նաև փորձագիտական խմբի հետ հանդիպում ունեցած համալսարանականների խմբերի մասին (ԵՊՀ խորհրդի, գիտխորհրդի անդամներ, ֆակուլտետների դեկաններ և ամբիոնների վարիչներ, պրոֆ-դասախոսական կազմ և այլն): Բանախոսի գնահատմամբ նախնական արդյունքները դրական էին, սակայն վերջնական արդյունքները կսպասվեն ընթացիկ տարվա օգոստոսին:

Որոշեցին. – Ընդունել ի գիտություն:

4. Լսեցին. – **ԵՊՀ Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի գործունեության մասին:** Կենտրոնի տնօրեն Ա. Ղազինյանը ներկայացրեց կենտրոնի կողմից իրագործվող կրթական ծրագրերը՝ <Եվրոպական ուսումնասիրություններ> միջդիսցիպլինար և <Մարդու իրավունքներ և ժողովրդավարացում> մագիստրոսական ծրագրերը: Նրա գնահատմամբ՝ առաջին ծրագրով հիմք դրվեց մեր կրթական համակարգում միջառարկայական կրթական ծրագրերի, երկրորդ ծրագրով՝ կոնտրեցիվներով կազմակերպվող կրթական ծրագրերի իրականացման գործընթացներին: Ներկայացվեց նաև ԵՈԻ կենտրոնի փորձագետների կողմից իրականացվող 2 խոշոր գիտական ծրագրերի մասին. 1/ <Եվրամիության աշխարհաքաղաքական շահերը Հարավային Կովկասում>, 2/ <ԵՄ ազատ առևտրի գոտու համաձայնագրի ազդեցությունը Հայաստանի տնտեսության վրա>: Ըստ բանախոսի այս

ծրագրերի արդյունքը կնպաստի Եվրամիության հետ հարաբերությունների հետագա ընթացքի շուրջ մեր քայլերն առավել որոշակի պատկերացնելուն:

Արտահայտվեցին - Տնտեսագիտության ֆակուլտետի դեկան Հ. Սարգսյանը հանդես եկավ վերջին շրջանում քաղաքական քննարկումների կիզակետում գտնվող ԵՄ-Եվրագես այլընտրանքի շուրջ հարցադրմամբ. Ըստ Ղազինյանի՝ եվրասիական մաքսային գոտի ՀՀ-ի մուտքգործելը կկանգնեցնի ԵՄ շրջանականերում ՀՀ-ի ներգրավմամբ ինտեգրացիոն գործընթացների հետագա զարգացումը: Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի դեկան Յու. Վարդանյանը հանդես եկավ եվրոպագիտություն մասնագիտության մանրամասնման մասին հարցադրմամբ: Կենտրոնի գործունեության արդյունավետության մասին արտահայտվեց Ռեկտոր Ա. Սիմոնյանը՝ կարևորելով կենտրոնի ինքնաբավության հանգամանքը:

5. Լսեցին. – Տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական-հետազոտական կենտրոնի գործունեության մասին:

Կենտրոնի գիտական ղեկավար Ս. Շուքուրյանը ներկայացրեց կենտրոնի գործունեության երեք ուղղությունները. Կրթություն, հետազոտություն և աջակցություն ՀՀ-ում տեղեկատվական տեխնոլոգիաների շուկայի զարգացմանը: Շուքուրյանը ներկայացրեց տվյալներ շրջանավարտների՝ մասնագիտության գծով աշխատանքի տեղավորվելու մասին (90 տոկոս): Այժմ կենտրոնը գտնվում է ֆինանսավորման աղբյուրների որոնման գործընթացի մեջ, համագործակցում է այդ հարցով Գերմանական համալսարանների կոնսորցիումի հետ: Սինոփսիսի հետ կենտրոնն աշխատում է նոր՝ <Ներդրված համակարգեր> ծրագրի վրա:

Արտահայտվեցին. - Ռեկտոր Ա. Սիմոնյանը խրախուսեց հատկապես Հայկական վիրտուալ քոլեջի շրջանակներում իրականացվող կուրսերի առցանց դարձնելու գործընթացը: ԻԿՄ ֆակուլտետի դեկան Վ. Դումանյանը հարց տվեց Կենտրոնի՝ Համալսարանում ՏՏ ոլորտի զարգացմանը նպաստելու հանձնառության մասին: Շուքուրյանը նշեց, որ այսօր կենտրոնը աշխույժ կերպով ներգրավված է կրթության կազմակերպման ավտոմատացման գործընթացներում (քննական տեղեկագրեր, դիպլոմներ, գիտահետազոտական մասի տվյալների բազայի ստեղծում, համակարգչային ունակությունների զարգացմանը նպաստող կուրսերի ավտոմատացում և այլն):

Որոշեցին. – հաղորդումն ընդունել ի գիտություն:

6. Լսեցին. – ԵՊՀ քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոնի գործունեության մասին:

Կենտրոնի տնօրեն Դ. Հովհաննիսյանը ներկայացրեց կենտրոնի գործունեության երեք ուղղությունները. 1/ լոկալ մշակույթների ադապտացիոն մեխանիզմների ուսումնասիրություն, 2/ աշխարհաքաղաքական վերլուծություններ. Մեզա և միկրո տարածաշրջանների վրա գլոբալ միտումների ազդեցության չափումներ, 3/ սիտուատիվ վերլուծություններ:

Արտահայտվեցին. – Ռեկտոր Ա. Սիմոնյանը գոհունակություն հայտնեց կենտրոնի գործունեության վերաբերյալ:

Որոշեցին. – Դ. Հովհաննիսյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

7. Գիտական գեկուցում. – հանված է օրակարգից:

8. Լսեցին.- Ընթացիկ հարցեր

8.1. Լսեցին. - <<Երևանի պետական համալսարանի մասս-մեդիայի կրթական կենտրոն>> կառուցվածքային ստորաբաժանում ստեղծելու մասին: Ռեկտոր Ա. Միմոնյանը նշեց, որ Մեդիաարդյունաբերության ոլորտի բարձր մասնագիտական որակավորում և պատրաստվածություն ունեցող մասնագետներ պատրաստելու նպատակով Երևանի պետական համալսարանը Հայաստանի հանրային հեռուստաընկերության կողմից առաջարկություն է ստացել Երևանի պետական համալսարանում համատեղ ստեղծելու <Մասս-մեդիայի կրթական կենտրոն>:

Կենտրոնում նախատեսվում է նոր մագիստրոսական ծրագրերի միջոցով պատրաստել մեդիա ոլորտի մրցունակ մասնագետներ: Ուսուցումը կազմակերպվելու է հայրենական և արտերկրյա հեռուստատեսային ոլորտի արհեստավարժ մասնագետների ներգրավմամբ՝ հատուկ մշակված ծրագրերով: Ուսուցումն առավելագույնս մոտեցված է լինելու հեռուստատեսության աշխատանքի իրական պայմաններին: Ուսումնառության ընթացքում ուսանողները հնարավորություն կունենան տարբեր հեռուստատեսային նախագծերում անմիջականորեն մասնակցելու հեռուստատեսության ստեղծագործական գործընթացին: Ուսանողների համար ոլորտի առաջատար մասնագետների կողմից պարբերաբար կազմակերպվելու են նաև մաստեր-կլասսներ:

Որոշեցին. –

1. Ստեղծել «Երևանի պետական համալսարանի մասս-մեդիայի կրթական կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանումը:
2. Հանձնարարել Երևանի պետական համալսարանի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին՝ երկամսյա ժամկետում Երևանի պետական համալսարանի ռեկտորին ներկայացնել կենտրոնի կանոնադրության նախագիծը և կառուցվածքը:

8.2. Լսեցին. – Հայցորդների ընդունելության չափանիշների մասին: Պրոռեկտոր Գ. Գևորգյանը հանդես եկավ հայցորդների ընդունելությունը կարգավորող չափանիշների մասին առաջարկությամբ:

Արտահայտվեցին. – Գ. Ղազինյանը առաջարկեց խստացնել ընդունելությունը՝ պահանջելով 2 տպագրված հոդված և օտար լեզվի քննության արդյունքները, Վ. Դումանյանը առաջարկեց հանդես գալ ԲՈՂ-ի առջև առաջարկությամբ, որ նշված չափանիշները դառնան նորմ այլ ՄՈՒՀ-երում ևս՝ դրանցում ընդունելությունը ԵՊՀ-ի համեմատ հեշտ չլինելու նպատակով:

Որոշեցին. – Սահմանել հայցորդների ընդունելության հետևյալ չափանիշները.

- ա) Ունենալ երկու տպագրված հոդված ԲՈՂ-ի կողմից երաշխավորված հանդեսներում;
- բ) Հանձնել քննություն անգլերենից ԵՊՀ հանձնաժողովում
- գ) Ստանալ մասնագիտական ամբիոնի դրական եզրակացությունը
- դ) Ստանալ ղեկավարի գրավոր համաձայնությունը:

Հայցորդության համար փաստաթղթերն ընդունել տարին երկու անգամ. սեպտեմբերի 1-20 և հունվարի 11-30:

8.3 Լսեցին. - Ակտուարական մաթեմատիկայի ամբիոնի անվանափոխության մասին: Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի դեկան Ա. Սահակյանը նշեց, որ ամբիոնի անվանափոխությունն անհրաժեշտ է, քանի որ մասնագիտությունը ներկայում կոչվում է <Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկայի ամբիոն>:

Որոշեցին. - <<Երևանի պետական համալսարանի ակտուարական մաթեմատիկայի ամբիոն>> կառուցվածքային ստորաբաժանումը վերանվանել <<Երևանի պետական համալսարանի ակտուարական և ֆինանսական մաթեմատիկայի ամբիոն>>:

8.4 Լսեցին. - Պրոֆ. Տարիել Բարսեղյանին Քաղաքացիական իրավունքի ամբիոնի պատվավոր վարիչի կոչում շնորհելու մասին: Իրավագիտության ֆակուլտետի դեկան Գ. Ղազինյանը ներկայացրեց պրոֆ Բարսեղյանի գիտական վաստակը, նրա դերը Հանրապետությունում քաղաքացիական իրավունքի ճյուղի զարգացման գործում և ավանդը երիտասարդ մասնագետների պատրաստման գործում:

Որոշեցին. - ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչի պարտականությունները վայր դնելու կապակցությամբ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Տարիել Կարապետի Բարսեղյանին շնորհել ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի պատվավոր վարիչի կոչում:

8.5 Լսեցին. - Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախագահ Դին Շպիլմանին ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում շնորհելու մասին: Գ. Ղազինյանը ներկայացրեց Դին Շպիլմանի մասնագիտական և գիտական գործունեությունը: Նրան ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում շնորհելու մասին որոշումը կարևորվեց այս տարի Հայաստանի՝ Եվրախորհրդում նախագահություն ստանձնելու, հուլիսի սկզբին Հայաստանում համաեվրոպական խոշոր վեհաժողով իրականացնելու համատեքստում:

Որոշեցին. - Հասարակական բեղուն գործունեության, գիտության ասպարեզում ակնառու ձեռքբերումների, մարդու իրավունքների պաշտպանության գործում նշանակալի հանձնառությունների համար Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախագահ դոկտոր Դին Շպիլմանին շնորհել Երևանի պետական համալսարանի պատվավոր դոկտորի կոչում:

8.6. Լսեցին . -Դեղագործական քիմիայի ամբիոնի վարիչ Աշոտ Սաղյանի <<Կենսատեխնոլոգիա>> վերնագրով դասագիրքը հրատարակության երաշխավորելու և այն որպես բուհական դասագիրք ճանաչելու հարցում ՀՀ կրթության և գիտության նախարարությանը միջնորդելու մասին: Ռեկտոր Ա. Սիմոնյանը այս հարցում դրական որոշում կայացնելու վերաբերյալ առաջարկեց բաց քվեարկություն:

Որոշեցին. –

1. Դեղագործական քիմիայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Աշոտ Սերոբի Սադյանի <<Կենսատեխնոլոգիա>> վերնագրով դասագիրքը երաշխավորել հրատարակության:
2. Միջնորդել ՀՀ կրթության և գիտության նախարարությանը՝ նշված դասագիրքը որպես բուհական դասագիրք ճանաչելու հարցում:

8.7. Լսեցին. - Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի կանոնադրությունում կատարված փոփոխությունները հաստատելու մասին: Գիտքարտուղար Մ. Սողոմոնյանը նշեց, որ փոփոխությունը կապված է ֆակուլտետի կանոնադրությունում նոր կազմավորված՝ Լեզվաբանության և միջմշակութային հաղորդակցության անվերենի ամբիոնի անվան ավելացման հետ:

Որոշեցին. - Հաստատել Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի կանոնադրությունում կատարված փոփոխությունները:

8.8 Լսեցին. - Միջուկային ֆիզիկայի ամբիոնի ղոցենտ Անահիտ Բալաբեկյանի <Միջուկային ռեակցիաներ> վերնագրով ուսումնական ձեռնարկը հրատարակության երաշխավորելու և այն որպես բուհական ձեռնարկ ճանաչելու հարցում ՀՀ կրթության և գիտության նախարարությանը միջնորդելու մասին: Ռեկտոր Ա. Սիմոնյանը այս հարցում դրական որոշում կայացնելու վերաբերյալ առաջարկեց բաց քվեարկություն:

Որոշեցին. -

1. Միջուկային ֆիզիկայի ամբիոնի ղոցենտ Անահիտ Բալաբեկյանի <<Միջուկային ռեակցիաներ>> վերնագրով ուսումնական ձեռնարկը երաշխավորել հրատարակության:
2. Միջնորդել ՀՀ կրթության և գիտության նախարարությանը՝ նշված ձեռնարկը որպես բուհական ձեռնարկ ճանաչելու հարցում:

ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ

Ա. Ն. Սիմոնյան

Գիտական խորհրդի քարտուղար

Մ. Ա. Սողոմոնյան

04/07/2013